«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի փոփոխվող հոդվածների ինկորպորացիա

Հոդված 14. Ոստիկանության ծառայողին պաշտոնի նշանակելու պայմանները

(…)

6. Ոստիկանության միջին խմբի պաշտոններում՝ բացառությամբ պարեկի և ավագ պարեկի պաշտոնների կարող են նշանակվել ոստիկանական միջին մասնագիտական կամ Կառավարության կողմից սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձինք հետևյալ առաջնահերթությամբ.

1) ոստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում բարձրագույն կամ ոստիկանական միջին մասնագիտական կրթություն ստացած ծառայողները.

2) ոստիկանության ուսումնական հաստատությունում վճարովի հիմունքներով բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիները.

3) Կառավարության կողմից սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիները:

6.1. Ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման կազմում (բացառությամբ գլխավոր խմբի պաշտոնների և հետաքննության մարմնի լիազորություններ իրականացնող ծառայողների)՝ ոստիկանության ծառայության պաշտոններում կարող են նշանակվել միայն ոստիկանության ուսումնական հաստատությունում պարեկի նախնական մասնագիտական կրթություն ստացած անձինք: Ոստիկանության ~~այլ~~ ստորաբաժանումների ծառայողների նշանակումը պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման կազմում (բացառությամբ վերջինիս կազմում հետաքննության մարմնի լիազորություններ իրականացնող ծառայողների) կատարվում է բացառապես ոստիկանության ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացը ավարտելուց հետո:

…

Հոդված 16. Ոստիկանության ծառայողի վերապատրաստումը

1. Ոստիկանության գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման

առնվազն 5 տարին մեկ անգամ՝ Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների համապատասխան ուսումնական հաստատություններում:

~~1.1. Մինչև ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման կազմում նշանակվելը (բացառությամբ գլխավոր խմբի պաշտոնների և հետաքննության մարմնի լիազորություններ իրականացնող ծառայողների) ոստիկանության ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման՝ պարեկի նախնական մասնագիտական կրթական ծրագրով:~~

1.1~~2~~) Ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման՝ կրտսեր և միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման՝ երեք տարին մեկ անգամ: